ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Ռուստամ Մարգարյանի

Ես՝ Ռուստամ Մարգարյանս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024 թվականի հունվարի 10-ին կնքված N 7 պայմանագրի համաձայն:

2024 թվականի ապրիլի 9-ից մինչև հունիսի 28-ը ներառյալ իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ ֆինանսների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 40-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան» ՊՈԱԿ-ում («Նուբարաշենի մարզառազմական մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ-ի՝ «Փոքր Միեր կրթահամալիր» ՊՈԱԿ-ի իրավահաջորդ) իրականացվող ստուգման խմբի կազմում՝ որպես խմբի ղեկավար:
2. ՀՀ ֆինանսների նախարարի 2024 թվականի ապրիլի 30-ի թիվ 19-Ա հանձնարարագրով ընդգրկվել եմ ՀՀ առողջապահության նախարարության <<Վ.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ-ում իրականացվող ստուգման խմբի կազմում՝ որպես խմբի ղեկավար:
3. Մասնակցել եմ ստուգումների արդյունքներով ստուգման ակտերի, զեկուցագրերի, գրությունների, տեղեկանքների կազմման աշխատանքներին և համապատասխանաբար առաջարկություններ ներկայացրել ստուգվող կազմակերպություններում արձանագրված խախտումների ու թերությունների վերացման ուղղությամբ:
4. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության
վարչության փորձագետ Ռուստամ Մարգարյան